ԳՐԵՏԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Թարգմանչաց դպրոցի գործունեության ընթացքում (V դար) ձևավորված փիլիսոփայական տերմինները, պայմանավորված տվյալ ժամանակաշրջանի լեզվա-քերականական մոտեցումներով, զգալի շերտ են ներկայացնում գրաբարի բառային կազմում, որ կարոտ է համակողմանի ուսումնասիրության:

Հայտնի է, որ «*փիլիսոփայական բնույթի բնագրերի՝ թարգմանությանը առաջին անգամ հայ թարգմանիչները հանդիպեցին Աստվածաշնչում՝...*», և միևնույն ժամանակ «*...այն չէր կարող բավարարել գիտական փիլիսոփայական մտքի պահանջները, թեկուզ փիլիսոփայական տերմինոլոգիայի ստեղծման առումով*»[2]:

Լեզուն մշտապես շարժման մեջ է, և «*լեզվական յուրաքանչյուր միավոր լեզվի զարգացման ընթացքում կրում է իմաստի, ձևի ու գործառության փոփոխություններ, որոնց հետևանքով փոփոխվում է բառի կազմը, իմաստը, նաև՝ բառադրիչների փոխհարաբերությունները*»[3]: Սրանով պայմանավորված՝ փիլիսոփայական տերմինաբանության քննությունը պետք է սկսել գրաբարից: Լեզվի զարգացման հենց այս շրջանում փիլիսոփայական միտքը փորձում էր հունարենից տերմիններ պատճենել, երբեմն դիմում էր նկարագրական եղանակին՝ ելնելով տեքստի բովանդակությունից:

Նման հնարավորություն ընձեռում էին գրաբարի հարուստ բառապաշարն ու բառակազմական միջոցները. կային, անշուշտ, դժվարություններ,

---

*Փիլիսոփայական բնույթի մի շարք աշխատություններ զգալի դեր են ունեցել հայ փիլիսոփայական տերմինաբանության ձևավորման և զարգացման գործում, ինչպես՝ Ե.Կողբացու «Եղծ աղանդոց»-ը, Մ.Մաշտոցի «Յաճախապատում ճառք»-ը, Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»-ը («Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը» հատվածը), Փ. Եբրայեցու («Յաղագս նախախնամութեան», «Վասն լինելութեանն», «Լուծմունք ելիցն» և այլն), Պլատոնի («Տիմեոս», «Փեդոն», «Եւտիփրոն», «Մինովս»), Արիստոտելի («Ստորոգութիւնք», «Յաղագս մեկնութեան»), Պորփյուրի («Ներածություն») երկերի թարգմանությունները, Դ.Անհաղթի «Սահմանք իմաստասիրականք»-ը և Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը և այլն:

[1] Արևշատյան Ս. Ս., Հայոց գրերի ստեղծման պատմական պատճառները և հին հայկական թարգմանությունները, Ե., 1964, ԲՍ, N 7, էջ 68:

[2] Նույն տեղում:

[3] Աղայան Է. Բ., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 7:

որոնք հիմնականում կապված էին փոխառյալ տերմինների իմաստային դրսևորումների հստակեցման հետ:

Այս հարցում մեծ ծառայություն մատուցեցին «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»* աշխատության հեղինակները, որոնք բառարանում զետեղեցին գրաբարի գրեթե բոլոր բառերը՝ վկայված գլխավորապես 5-11-րդ դարերի հայ մատենագրությանՆ մեջ:

Այս հոդվածում անդրադարձել ենք հին հայերենի տերմինների իմաստաբանական քննությանը, փորձել ենք դրանք խմբավորել ըստ իմաստային-թեմատիկ խմբերի (կամ շարքերի): Այս կարգի ուսումնասիրությամբ մենք նպատակ ենք ունեցել ցույց տալ փիլիսոփայական տերմինների հիմնական իմաստագործական շրջանակները գրաբարում, որը միաժամանակ կարող է համեմատական խարիսխ դառնալ պատմական քննության համատեքստում:

Այս առումով նախ պետք է խմբավորել փիլիսոփայական տերմիններն ըստ համապատասխան ճյուղերի, առանց որի հնարավոր չէ պատկերացնել փիլիսոփայությունն այդ ժամանակաշրջանում: Այսօրինակ դասակարգումը ճանաչողական նշանակություն ունի՝ տվյալ տերմինն իր ոլորտում տեսնելու և ըմբռնելու առումով:

Գոյաբանական* **տերմինները** վերաբերում են կեցությանը՝ իր երկու ոլորտներով՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Առաջինը կապված է մարդու հոգևոր աշխարհի, երկրորդը՝ նյութական ողջ իրականության հետ: Ինչպես՝

անորոշ-անսահմանական	է
ապագայ	էութիւն
Աստված	ինքնութիւն
բացարձակ	հաւիտենականութիւն
բնութիւն	յատկութիւն
գոյ	նիւթ
գոյացութիւն	որակ և այլն:

Իմացաբանական* **տերմինները** արտացոլում են այն երևույթները, որոնք կապվում են բնության ճանաչողության հիմնախնդիրների, գիտելիքի և իրականության հարաբերության համընդհանուր պրոբլեմների հետ: Այն, այսպես կոչված, արտացոլման տեսություն է: Իմացաբանական տերմիններ են՝

արհեստ	ընդունակ
բաղխոհական	իմացութիւն

---

*Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ Մեծից Մխիթարայ աբբահօր՝ Հ.Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Միւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ.հ. Ա, Բ, Վենետիկ, 1836-37:

*Գոյաբանություն՝ օնտոլոգիա: Այս տերմինն առաջացել է հունարեն «ὄντως» («էական») և «λόγος» («ուսմունք») բառերից:

*Իմացաբանություն՝ գնոսեոլոգիա: Տերմինն առաջացել է հունարեն «γνῶσις» («իմացություն») և «λόγος» («ուսմունք») բառերից:

բանականն
բացերևութիւն
գիտութիւն
երևակայութիւն
զգայութիւն
զօրութիւն
հմտութիւն
ճանաչում
ճշմարտութիւն
նախագիտութիւն
ներհմտութիւն
տրամախոհութիւն և այլն:

Տրամաբանական* տերմինները վերաբերում են մտածողության օրենքներին ու ձևերին, գիտական ճանաչողության օրինաչափություններին, ինչպես՝

առաջարկութիւն
բաժանումն
բաղդատական
բաղկացութիւն
բաղհաւաքումն
տեսակագոյն
սեռ
սեռական
սեռականագոյն
վերլուծականք
տեսակ
տրամաբանական և այլն:

Բարոյագիտությունը* մարդու վարքի կանոնների և նորմերի ամբողջականությունն է, որով ղեկավարվում են հասարակության անդամները (մարդիկ): Բարոյագիտական տերմիններ են՝

ազատութիւն
ամոթխածութիւն
անձնիշխանութիւն
առաքինութիւն
արդարութիւն
ընտրողութիւն
նախանձ
ներանձնական
ներշնչական
տրամադրութիւն և
այլն:

Հոգեբանությունն* ուսումնասիրում է մարդու հոգեկան գործունեությունը կամ հոգեկան ակտիվությունը: Հոգեբանական և փիլիսոփայական տերմինների կապը նույնպես սերտ է, ինչպես՝

անձնաւորութիւն
զգայութիւն
ըմբռնումն
իմացութիւն
խառնուածք
հմտութիւն
հոգի
պատճառաբանութիւն
այլն:

Կրոնական- աստվածաբանական* տերմինները կապվում են մի կողմից հավատի վրա հիմնված պատկերացումների, համոզմունքների, գաղափարների հետ, մյուս կողմից ներկայացնում են տվյալ կրոնի դավանաբանության համա-

---

*Տրամաբանություն՝ լոգիկա: Տերմինն առաջացել է հունարեն «λογικά» բառից:
*Բարոյագիտություն՝ էթիկա: Տերմինն առաջացել է հունարեն «έθος» («ավանդույթ», «կարգ», «բարքեր») և «λόγος» («ուսմունք») բառերից:
*«Հոգեբանություն» հասկացությունն առաջացել է հունարեն «πνέυμα» և «λόγος» («ուսմունք») բառերից:
*Կրոն. լատիներեն՝ «religio»: «Աստվածաբանությունն» առաջացել է հունարեն «θεος» և «λόγος» («ուսմունք») բառերից:

կարգը: Մեր ընտրանքում եղած տերմինների շարքում հանդիպեցին հետևյալները՝

բաղազանութիւն	հաւատ
բան	հոյս
բնութիւնակից	միասնականութիւն
իսկակցութիւն	ոգի և այլն:

<u>Գեղագիտական* տերմինները</u> արտացոլում են մարդու զգայական վերաբերմունքը շրջապատի, աշխարհի նկատմամբ: Գեղագիտական տերմիններ են՝

արվեստ	ներդաշնակութիւն
գեղեցիկ	ողբերգական
ճարտասանութիւն	վեհ և այլն:

<u>Քաղաքագիտական* տերմինները</u> վերաբերում են քաղաքականությանը և քաղաքական հարաբերություններին, ինչպես՝

ինքնակամ	կամակցութիւն
ինքնիշխան	հատումն
լծակցութիւն	օժանդակ և այլն:

Սա՛ սրանք են փիլիսոփայական տերմինների գործառական ոլորտները, որոնք միաժամանակ ներկայացնում են իմաստային-թեմատիկ խմբերը գրաբարում:

Դեռևս գրաբարում փիլիսոփայական տերմինահամակարգում առկա էին բազմիմաստության, հոմանշության, համանունության երևույթներ, ինչը «*հասկացություն-տերմինների անկայունության և անորոշության*[4]» վկայությունն էր: Մինչ օրս տերմինաբանությունը հստակեցման կարիք ունի դրանք չեզոքացնելու առումով, թեպետ ինչքան էլ փորձենք մեկ հասկացությանը մեկ անուն տալ, վերջնական եզրագծին հասնելը շատ դժվար է:

Հայտնի է, որ բազմիմաստ բառերն ունեն մեկից ավելի իմաստներ. սա վերաբերում է նաև տերմիններին: Մեջբերենք մի քանի վկայություններ, ինչպես՝ «*...Բնութիւն բառը շատ հաճախ գործածվում է բնութիւն, բնականն, երրորդութիւնից մեկը իմաստներով, երբեմն՝ տարր, տարերք իմաստներով, գոյ բառը էական, գոյ (ի հակառակ չգոյ ծևի) հասկացությունները նշանակելու համար: **Էականը** նշանակելու համար, բացի նրանից գործածվում են արարած, **էականք, գոյացեալ** տերմինները: Իսկ **գոյացութիւն** տերմինն ունի նաև գոյի, կեցութեան իմաստ:*

---

*Գեղագիտություն՝ էսթետիկա: Տերմինն առաջացել է հունարեն «αισθητική» և «λόγος» («ուսմունք») բառերից:

* Առաջացել է հունարեն «πολιτική» բառից («պետություն կառավարելու արվեստ»):

[4] Аревшатян С.С.,Формирование философской науки в древней Армении (5-6вв.), Е., 1973, էջ 132.

Մարմին հասկացությունը նշանակվում է մարմին, մարմնաւոր, տարր, տարրաւոր տերմիններով: Ընդ որում «տարր»-ը հաճախ գործածվում է տարր, տարերք իմաստներով[5]»և այլն:

Առանձնացնենք ևս մի քանի բազմիմաստ փիլիսոփայական տերմիններ,ինչպես՝

Անհատական. 1. Անբաժանելի: 2. Անհատնում:

Բաղադրութիւն. 1. Բաղկացութիւն: 2. Միաւորութիւն:

Դրութիւն. 1. Բաղադրութիւն: 2. Ստորասութիւն:

Խելամտութիւն. 1. Հմտութիւն: 2. Մակացութիւն, գիտութիւն: 3. Իմաստութիւն:

Կարողութիւն. 1. Զօրութիւն: 2. Հնարաւորութիւն:

Իմացողութիւն. 1. Իմացումն: 2. Հասողութիւն: 3. Ըմբռնումն:

Տրամախոհութիւն. 1.Մտածութիւն, 2.Խորհուրդ, 3.Միտք և այլն:

Մի շարք տերմիններ միևնույն բովանդակությունն արտահայտում են տարբեր բառերով, որոնք ունեն հոմանշային հարաբերություններ:

Հոմանիշ փիլիսոփայական տերմինները ներկայացնում ենք ըստ հարաբերակից անդամների քանակի: Մեր ընտրանքում եղած փիլիսոփայական տերմինների շարքում հանդիպեցին երկանդամ, եռանդամ, քառանդամ, հնգանդամ, բազմանդամ հոմանշային շարքեր, ինչպես՝

ա) Երկանդամ հոմանիշներ

ազդողականն-ներգործական
բանաւորութիւն-բանականութիւն
գոյ-գոյակ
եղծումն-ապականութիւն
ենթակայութիւն-ենթակացութիւն
մակացութիւն-գիտութիւն
միտք-բանականութիւն
պառճառ-սկիզբ և այլն:

բ) Եռանդամ հոմանիշներ

ազատութիւն-ազատականութիւն-անձնիշխանութիւն
Աստված-է-արարիչ
բանականն-իմացական-մտաւոր
խոհականութիւն-իմաստութիւն-մտածութիւն
հիւղ-նիւթ-տարր
մշտնջենաւորութիւն-յարակայութիւն-յարատևութիւն
շնչական-զգայական-կենդանական
ողջախոհութիւն-ժուժկալութիւն-պարկեշտութիւն
ստորասացութիւն-ստորասութիւն-առասացութիւն
տրամաբանութիւն-տրամախօսութիւն-բանականն և այլն:

գ) Քառանդամ հոմանիշներ

Ոչինչ-անգոյ-չգոյութիւն-անգոյութիւն
հակադրութիւն-հակակայութիւն-ներհակութիւն-հակառակութիւն

---

[5] Նույն տեղում:

որակ-որակութիւն-որպիսութիւն-տեսակ
տրամախոհութիւն-մտածութիւն-միտք-բանականութիւն և այլն:

դ) Հնգանդամ հոմանիշներ

էութիւն-իսկութիւն-բնութիւն-ինքնութիւն-գոյացութիւն և այլն:

ե) Բազմանդամ հոմանիշներ

Հաւաքումն-բաղհաւաքումն-շարաբանութիւն-հաւաքաբանումն-հաւաքաբանութիւն-հետևաբանութիւն-հաւաքականն-հաւաքականութիւն և այլն:

Փիլիսոփայական տերմինները կարող են ցուցաբերել հականշային հարաբերություն՝ ընդ որում թե հակադրական, թե ժխտական: Ինչպես՝

ա) Հակադրական հականիշներն արտահայտում են միմյանց հակադիր իմաստներ: Փիլիսոփայական տերմինների շարքում հաճախ կարելի է այսպիսի հակադրություններ ցույց տալ, ինչպես՝

անհրաժեշտութիւն-պատահականութիւն
առաքինութիւն-արատ
արտաքին-ներքին
բարի-չար
բացարձակ-հարաբերական
գոյացական-պատահական
էութիւն-երևոյթ
ընդհանուր-մասնաւոր
հավերժական-ժամանակաւոր և այլն:

բ) Ժխտական են կոչվում այն հականիշները, որոնցից մեկը ժխտում, բացասում է մյուսի ցույց տված հատկանիշի առկայությունը, ինչպես՝

բանական-ոչ բանական
գոյ-չգոյ-անգոյ-ոչ գոյ
էութիւն-ոչ էութիւն-չէութիւն
կատարելի-անկատարելի-ոչ կատարելի
մշտնջենաւոր-ոչ մշտնջենաւոր
շնչաւոր-անշնչաւոր
պատճառ-անպատճառ
օգտակար-անօգտակար և այլն:

Համանուն փիլիսոփայական տերմինների շարքում հանդիպում են լիակատար համանուններ, ինչպես՝

ազգ1- «ժողովուրդ»
ազգ2- «տեսակ»
բնութիւն1- «էութիւն»
բնութիւն2-«բնաւորութիւն»
գոյութիւն1- «գոյակ»
գոյութիւն2 - «էութիւն»
գոյութիւն3 - «անձնաւորութիւն»
իմացումն1 - «իմանալը»
իմացումն2 - «խորհուրդ»
հասարակ1 - «սովորական»
հասարակ2 - «ընդհանուր»
հարացոյց1 - «նախատիպ»
հարացոյց2 - «նախագիտութիւն»
որակ1 - «որպիսութիւն»
որակ2 - «տեսակ» և այլն:

Մեր ընտրանքում եղած փիլիսոփայական տերմինների հոմանշային, հականշային, համանունական շարքերի ուսումնասիրությունը փաստում է, որ վերջիններս պարզ, ածանցավոր, բարդ և բարդածանցավոր կազմություններ են, ընդ որում փոքրաթիվ են պարզ տերմինները, ինչպես՝ Աստված, է, գոյ, պատճառ, սկիզբ և այլն, գերակշռում են ածանցավոր կազմությունները՝ -ական, -աւոր և հատկապես՝ -ութիւն վերջածանցներով բաղադրված ձևերը, ինչպես՝ ազատութիւն, բանականութիւն, բնաւորութիւն, ժամանակաւոր, իմացական, ինքնութիւն, մշտնջենաւոր, մտածութիւն, շնչական և այլն, ածանցներ, որոնք իրենց կենսունակությունը չեն սպառել նաև արդի հայերենում: Հանդիպում են նաև ան-, չ- և հունաբան դպրոցի ստեղծած՝ ենթ-, բաղ-, բաց-, ընդ-, հակ-, մակ-, նախ-, ներ-, ստոր-, տրամ- նախածանցներով կազմված ձևերը և այլն:

Կարելի է առանձնացնել նաև բայահիմք ունեցող տերմինները, որոնք նույնպես որոշակի տեղ են զբաղեցնում, ինչպես՝ առասացութիւն, գոյացութիւն, իմացութիւն և այլն:

Ավելացնենք նաև, որ փիլիսոփայական տերմինները հիմնականում գոյականներ են, ինչպես՝ ազատականութիւն, բաղհաւաքումն, բանականութիւն, եղծումն, էութիւն, հակադրութիւն, միտք, որակ, տրամաբանութիւն և այլն: Հանդիպում են նաև ածականներ, ինչպես՝ բացարձակ, ընդհանուր, ժամանակաւոր, իմացական, կենդանական, հավերժական, մտաւոր, պատահական և այլն: Իսկ եթե ուշադրություն դարձնենք բարդ տերմիններին, ապա կնկատենք, որ ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ հանդիպում են հետևյալ կաղապարներով կազմությունները՝ գոյական+գոյական՝ անձն+իշխան (ութիւն), մակբայ+գոյական՝ յար+ա+կայ (ութիւն), մակբայ+բայահիմք՝ յար+ա+տև (ութիւն), ածական+գոյական՝ ողջ+ա+խոհ (ութիւն) և այլն:

Հայտնի է, որ «ոչ»-ը գրաբարում կարող էր կիրառվել որպես գոյական, մակբայ և վերաբերական: Մեզ հանդիպած փիլիսոփայական տերմինների մեջ այն ժխտական մասնիկի դեր է կատարում՝ հավասարարժեք լինելով ան-, չ-նախածանցներին, ինչպես՝ գոյ-չգոյ-անգոյ-ոչ գոյ և այլն:

Անշուշտ, մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ սպառել փիլիսոփայական տերմինների քննությունը գրաբար լեզվավիճակում: Այնուամենայնիվ, մեր ձեռքի տակ եղած տերմինների իմաստաբանական քննությունը վեր է հանում գրաբարում դրանց իմաստային-թեմատիկ խմբերը, խմբերից յուրաքանչյուրի իմաստագործական շրջանակները, մյուս կողմից՝ բացահայտում է տերմինների ձևաիմաստային խմբերը՝ ներկայացնելով դրանց հոմանշային, հականշային և համանունական դրսևորումները: